ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.83
Ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-04/21»

ք. Երևան «11» նոյեմբերի 2021 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միսակ Արմենակի Մարգարյան» Ա/Ձ-ն, ի դեմս Մ.Մարգարյանի, որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գրասենյակային տարածքի դիզայն նախագծի հիման վրա իրականացվելիք շին.վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **28.12.21թ.:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով: Կապալառուն պարտավոր է բոլոր նյութերի ընտրությունը իրականացնել հեղինակային հսկողի՝դիզայն նախագծողի, անմիջական մասնակցությամբ՝ դիզայն նախագծում նեկայացված պատկերների համապատասխան:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես

նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, **15 օրվա ընթացքում** վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, **15 օրվա ընթացքում** վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ

որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **18 900 000 (տասնութ միիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:** Կապալառուն ԱԱՀ վճարող չի հանդիսանում: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարումն կիրականացնի շինարարական աշխատանքների ամբողջությամբ ավարտից հետո՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Միսակ Արմենակի Մարգարյան» Ա/Ձ,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 2 փ.,1 տ.,
Հ/Հ 220529670188000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 63319343

_____**Միսակ Արմենակի Մարգարյան Ա/Ձ**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 11 » նոյեմբերի 2021 թ. կնքված
N 2.83 պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԴԻԶԱՅՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՇԻՆ.ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ					
Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չ/Մ	ՔԱՆԱԿԸ	միավ. գին	ընդ. գին, հազ. դրամ
1	2	3	4	5	6
1	***ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ***				**3.61%**
1,1	Գոյություն ունեցող դռների ապամոնտաժում 11 հատ	մ²	23,00	1,3	29,900
1,2	Քարե երեսպատման ապամոնտաժ	մ²	25,00	0,47	11,750
1,3	Միջնորմների քանդում	մ3	2,00	20,43	40,860
1,4	Գաջե սվաղի քանդում	մ²	100,00	0,94	94,000
1,5	Գաջե քանդում պլինտուսների համար 150մմ բարձրությամբ 45գմ	գ.մ	45,00	0,99	44,550
1,6	Պատերի և առաստաղների հին ներկի շերտի հեռացում	մ²	230,00	0,17	39,100
1,7	Կախովի (Armstrong) առաստաղի ապամոնտաժում	մ²	53,00	0,75	39,750
1,8	Քարե հատակի քանդում	մ²	55,00	0,47	25,850
1,9	Քարե պլինտուսների քանդում	գ.մ	45,00	0,34	15,300
1,10	Վինիլե հատակների քանդում	մ²	50,00	0,16	8,000
1,11	Լամինատե հատակների քանդում	մ²	60,00	0,6	36,000
1,12	Ց/ա հարթեցուցիչ շերտի քանդում 30մմ	մ²	160,00	0,7	112,000
1,13	Շինարարական աղբի հավաքում,բարձում և տեղափոխում դեպի թափոնակույտ մինչև 13կմ	տ	32,00	3,67	117,440
2	***ՊԱՏԵՐ***				**19.56%**
2,1	Ներկառուցվող մալուխատարի իրականացում 50x50	մ	2,00	2,94	5,880
2,2	Միջնորմների իրականացում 100մմ բետոնե բլոկով՝ ամրանավորմամբ՝ ներառյալ ց/ա շաղախը 30մ²	մ³	3,00	29,74	89,220
2,3	Ամրան A-I 6.0 մմ	տ	0,08	623,16	46,737
2,4	Ե/բ բարավորների իրականացում գոյություն ունեցող պատերում	մ³	0,36	77,41	27,868
2,5	Ամրան A-I 6.0 մմ	տ	0,01	623,16	6,855
2,6	Ամրան A-500CØ=12 մմ	տ	0,04	547,42	23,539
2,7	Պատերի սվաղում ց/ա շաղգախով մետաղական ցանցով	100մ²	0,50	204,67	102,335
2,8	Ցանց BP d=3,0մմ, բջիջը 150x150	մ²	50,00	0,64	32,000
2,9	Գիպսակարտոնե ջրակայուն 12,5մմ գ/կ սալերց տումբաների իրականացում ՝ ներառյալ մետաղական պրոֆիլները (0.5մմ)5 գ.մ.	մ	5,00	8,99	44,950
2,10	Պատերի երեսապատում կերամոգրանիտե սալերով 1200x600x12մմ, մակերևույթը անփայլ- ռելիեֆային, գույնը սև,տեքստուրան քարանման՝ ներառյալ սոսինձը և կարանյութը	մ²	45,00	37,51	1687,950
2,11	Պատերի հարթեցում գիպսոնիտային շաղախով	100մ²	1,30	210,96	274,248
2,12	Պատերի լատեքսային ներկում	100մ²	0,95	137,21	130,350
2,13	Պատերի ներկում բարձորակ ֆասադային ներկով	մ²	7,00	0,7	4,900
2,14	Պատերի երեսպատում առկա բնական քարերով (վերաշարում)	մ²	2,00	3,38	6,760

2,15	Սև հայելիյով պատերի իրականացում 4մմ	մ²	34,00	24,9	846,600
3	**ԱՌԱՍՏԱՂ**				**8.82%**
3,1	Գիպսակարտոնե ջրակայուն 12.5մմ սալերից առաստաղի իրականացում՝ ներառյալ մետաղական պրոֆիլները (0.5մմ) 5գծ.մ	մ²	36,00	6,82	245,520
3,2	Գիպսակարտոնե ջրակայուն 12.5մմ սալերից խորշի իրականացում՝ ներառյալ մետաղական պրոֆիլները (0.5մմ)45գծ.մ	մ	45,00	8,99	404,550
3,3	Գիպսակարտոնե ջրակայուն 12.5մմ սալերից դեկորատիվ հեծանների իրականացում՝ ներառյալ մետաղական պրոֆիլները (0.5մմ) 11գծ.մ	մ	11,00	8,99	98,890
3,4	Կախովի (Armstrong) առաստաղի իրականացում, գույնը սև՝ ներառյալ մետաղական պրոֆիլները (սև)	մ²	17,00	7,34	124,780
3,5	Առաստաղի հարթեցում գիպսոնիտային շաղախով	100մ²	1,50	261,41	392,115
3,6	Առաստաղի լատեքսային ներկում	100մ²	1,50	153,1	229,650
3,7	Առաստաղի ֆասադային ներկով քսահարթում	100մ²	0,05	123,11	6,156
4	**ՀԱՏԱԿ**				**23.69%**
4,1	Ներկառուցվող մալուխատարի իրականացում 50x50	մ	5,00	2,94	14,700
4,2	Հատակի ցեմենտսվազե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ մետաղական ցանցով (150x150)	100մ²	0,68	126,7	86,156
4,3	Ցանց BP d=3,0մմ, բջիջը 150x150	մ²	68,00	0,64	43,520
4,4	Հատակի ցեմենտսվազե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստությամբ մետաղական ցանցով (150x150)	100մ²	0,95	91,19	86,631
4,5	Ցանց BP d=3,0մմ, բջիջը 150x150	մ²	95,00	0,64	60,800
4,6	Ինքնահարթեցվող շերտ	մ²	68,00	3,47	235,960
4,7	Կերամոգրանիտե հատակի իրականացում 1200x600x12մմ, մակերևույթը անփայլ- ռելիեֆային, գույնը սև,տեքստուրան քարանման՝ ներառյալ սոսինձը և կարանյութը	100մ²	0,95	2464,58	2341,351
4,8	Կերամոգրանիտե պլինտուս 150մմ	մ	53,00	3,44	182,320
4,9	Կավրոլին, հասարակական վայրերի համար նախատեսված, միագույն սև, խտությունը 900-1500 գ/քմ	100մ²	0,68	1274,62	866,742
4,10	Կավրոլինե շրիշակներ ՄԴՖ հիմքի իրականացմամբ 150մմ (նույնով)	մ	25,00	4,59	114,750
5	**ԲԱՑՎԱԾՔՆԵՐ**				**18.5%**
5,1	12մմ թրծված ապակի ավազահարումով՝ ներառյալ , պրոֆիլները և տեղադրումը	մ²	6,00	65,43	392,580
5,2	12մմ թրծված ապակյա դռներ ավազահարումով՝ ներառյալ, ծխնիները, բռնակները և տեղադրումը (8 հատ)	մ²	16,00	133,74	2139,840
5,3	40մմ ՄԴՖ դուռ փայտե շրջանակով, ներկված ակրիլային նեկով, միջանցքի կողմից 4մմ սև հայելապատ, ներառյալ ներկառուցվող թաքնված ծխնիները (սև), փականը, բռնակը (սև) և տեղադրումը	հատ	2,00	302,44	604,880
5,4	Բացվածքների նորոգում և երեսպատում առկա բնական քարերով 20,0 մ	մ²	4,00	3,38	13,520
6	**ՋՈՒՐ, ԿՈՅՈՒՂԻ, ՋԵՌՈՒՑՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ**				**8.86%**
6,1	Ներկառուցվող ծորակ սև՝ ներառյալ կցամասերը և տեղադրումը (եվրոպական արտադրության)	հատ	2,00	63,11	126,220
6,2	Ներկառուցվող կախովի զուգարանակոնք՝ ներառյալ կցամասերը և տեղադրումը (եվրոպական արտադրության)	լրակազմ	2,00	313,5	627,000
6,3	Ներկառուցվող ջրաման՝ ներառյալ կցամասերը, դիմային պանելը և տեղադրումը (եվրոպական արտադրության)	լրակազմ	2,00	251,53	503,060
6,4	Տաք և սառը ջրի խողովակների մոնտաժ D20՝ ներառյալ դետալները և կցամասերը	մ	30,00	2,1	63,000

6,5	Ջրի գնդիկավոր փական D20	հատ	4,00	5,86	23,440
6,6	Պվք Ø50x2,8 մմ կոյուղու խողովակների մոնտաժում	մ	1,50	1,18	1,770
6,7	Պվք Ø110x3,3 մմ կոյուղու խողովակների մոնտաժում	մ	10,00	2,4	24,000
6,8	Տաք և սառը ջրի խողովակների մեկուսիչ D20	մ	30,00	0,25	7,500
6,9	Կոյուղագծի խողովակների մեկուսիչ D50	մ	1,50	0,52	0,780
6,10	Կոյուղագծի խողովակներ մեկուսիչ	մ	10,00	0,77	7,700
6,11	Ջեռուցման մարտկոցների սև յուղաներկում	100մ²	0,10	87,24	8,724
6,12	Օդափոխության խողովակաշարի իրականացում D100	մ	10,00	2,68	26,800
6,13	Օդափոխության մետաղական ցանց՝ սև (3 հատ)	հատ	3,00	29,25	87,750
7	***ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ***				**16.97%**
7,1	Հոսանքալար պղնձե 3x4մմ²	100մ	1,00	89,63	89,630
7,2	Հոսանքալար պղնձե 3x2.5մմ²	100մ	3,00	60,81	182,430
7,3	Հոսանքալար պղնձե 3x1.5մմ²	100մ	2,00	44,75	89,500
7,4	Ցանցային մալուխ FTP	100մ	0,50	49,66	24,830
7,5	Մալուխատարերի գոֆրե D30մմ	100մ	0,50	76,48	38,240
7,6	Մալուխատարերի գոֆրե D20մմ	100մ	1,00	41,99	41,990
7,7	Գծային լույսի ներկառուցվող մետաղական պրոֆիլով 100մմ	մ	27,50	17,84	490,600
7,8	Գծային լույսի ներկառուցվող մետաղական պրոֆիլով 20մմ	մ	2,60	6,6	17,160
7,9	Գծային LED լույս (3000K)՝ ներառյալ սնուցման բլոկերը (4հատ)	մ	70,00	20,31	1421,700
7,10	կետային LED լույս՝ սև D100 H150 3000K 18W	հատ	24,00	14,7	352,800
7,11	Հոսանքի բաշխիչ տուփ՝ ներառյալ ավտոմատները և տեղադրումը	հատ	1,00	51,51	51,510
7,12	Հոսանքի տուփ՝ ներառյալ տեղադրումը	հատ	27,00	0,19	5,130
7,13	Անջատիչ 1 կլավիշ սև՝ ներառյալ դիմային պանելը և տեղադրումը	100 հատ	0,03	210,65	6,320
7,14	Անջատիչ 2 կլավիշ սև՝ ներառյալ դիմային պանելը և տեղադրումը	100 հատ	0,03	273	8,190
7,15	Վարդակ հողանցումով սև՝ ներառյալ դիմային պանելը և տեղադրումը	100 հատ	0,19	213,16	40,500
7,16	Ցանցի խրոց սև՝ ներառյալ դիմային պանելը և տեղադրումը	100 հատ	0,02	179,57035	3,591
7,17	Հատակային հոսանքի և ցանցային հանգույց ներառյալ դիմային պանելը և տեղադրումը	100 հատ	0,01	2506,12	25,061
	ԸՆԴԱՄԵՆԸ				**17027,027**
	Շահույթ, 11%				**1872,973**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**18900,000**

* Կապալառուն աշխատանքները կատարում է՝«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ, ք.Երևան, «Զվարթնոց» ՕԿ, Ի.Գասպարյան 33 հասցեում: Վերանորոգման աշխատանքները կատարվելու են վերահսկվող տարածքում (ռեժիմային գոտում)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն
Ա.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Միսակ Արմենակի Մարգարյան» Ա/Ձ,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 2 փ.,1 տ.,
Հ/Հ 220529670188000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 63319343

Միսակ Արմենակի Մարգարյան Ա/Ձ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«11» նոյեմբերի 2021 թ. կնքված
N2.83 պայմանագրի

ՆԿԱՐԱԳԻՐ
սարքերի և սարքավորումների

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Prof time lighting	-	-	Հայաստան	Գծային LED լույս (3000K), ներառյալ սնուցման բլոկերը	1 տարի
1	Prof time lighting	-	-	Հայաստան	Կետային LED լույս՝ սև D100 H150 3000K 18W	1 տարի
1	Prof time lighting	-	-	Հայաստան	Ավտոմատ անջատիչ	1 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայէլեկտրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Միսակ Արմենակի Մարգարյան» Ա/Ձ,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 2 փ.,1 տ.,
Հ/Հ 220529670188000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 63319343

_____**Միսակ Արմենակի Մարգարյան Ա/Ձ**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«11» նոյեմբերի 2021 թ. կնքված
N2.83 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԴԻԶԱՅՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՇԻՆ.ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը
1	Քանդման աշխատանքներ	5 /հինգ/ օրացուցային օր
2	Պատերի կառուցում	12 /տասներկու/ օրացուցային օր
3	Էլեկտրալուսավորության մոնտաժում	5 /հինգ/ օրացուցային օր
4	Ջուր, կոյուղի, ջեռուցման, օդափոխման համակարգի կառուցում	6 /վեց/ օրացուցային օր
5	Առաստաղի կառուցում	10 /տաս/ օրացուցային օր
6	Հատակի կառուցում	10 /տաս/ օրացուցային օր
7	Բացվածքների, դռների տեղադրում	3 /երեք/ օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		**51 /հիսունմեկ/ օրացուցային օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
_____**Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Միսակ Արմենակի Մարգարյան» Ա/Ձ,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 2 փ.,1 տ.,
Հ/Հ 220529670188000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 63319343

_____**Միսակ Արմենակի Մարգարյան Ա/Ձ**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«11» նոյեմբերի 2021 թ. կնքված
N 2-83 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/2	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գրասենյակային տարածքի դիզայն նախագծի հիման վրա իրականացվելիք շին.վերանորոգման աշխատանքներ	18 900 000	**18 900 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն

_____ **Ա.Գասպարյան**
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Միսակ Արմենակի Մարգարյան» Ա/Ձ,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Եղեգնուտ, 2 փ.,1 տ.,
Հ/Հ 220529670188000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 63319343

_____ **Միսակ Արմենակի Մարգարյան Ա/Ձ**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 11 » նոյեմբերի 2021 թ. կնքված
N2.83 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 11 » նոյեմբերի 2021 թ. կնքված
N2.83 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն